

լերանց միջոցն երթայր դեռ մի ուրը եւ ծուռ. եւ մին օրն զայս ջուրս անցաք քսան եւ վեց անգամ: Եւ երեք օրն հասաք ԱՅՏՕՄԴ. ո՛չ վասն հեռաւորութեան, այլ վասն դժուարութեան ճանապարհին: Եւ անցեալ <sup>90</sup> զՏԷԼԻՕՐՄԱՆ՝ հասաք ԽՐԽՔԻԼԻՍԱՆ, որ էր զարմանալի շէնք. եւ էին բուսածու վէմք մեծամեծք, որ եւ տներն ամէն ի վրմէ կոփած էր. եւ բուն սարուծօրն որպէս ծառս եւ անտառ բուսել էին ահագին վէմք: <sup>95</sup>

Եւ անտի երեք օրն՝ Սեպտեմբեր Ժ. հասաք ի մեծահամբաւ հռչակաւոր, ծովահայեաց եւ կայսերանխտ մայրաքաղաքն Բուզանտիա, որ է Կոստանդնուպօլիս եւ այժմ կոչի ՄՏԱՄՊՕԼ, առ ցանկալին ամենեցուն: <sup>100</sup> Ապա հազար աւաղ զբարախտ եւ անաջող տալէհիս խմոյ, որ չժամանեցի Մսրայ կէմոցն, որ գնային յԵրուսաղէմ. վասն որոյ զբուն ձմեռն անդ մնացի. զի ցամաքով ճանփան կապ էր, եւ ահ կայր ի Պարսից: <sup>105</sup>

### 3. ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Եւ կայր Ստամպօլ հինգ եկեղեցի Հայոց. ի Վլանկայ երեք, աւագն Սուրբ Նիկողայոս, Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Սարգիս. ի Պալատն մէկ. եւ ի Սուրբամանաստրն մէկ, Սուրբ Գեւորգ անուն: Եւ կայր չորս հինգ <sup>5</sup>